6744

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«13» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 170 - 25

Նախաձեռնող՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ
ք. Երևան. Թումանյան փ., 4-րդ շ., 1-ին բն.

Գործունեությունը՝ *Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 21 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցում*
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 170 - 25

«13» հունիսի 2025թ.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 21 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Վեգա Ուորլդ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 21 հողամաս հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծովակալ Իսակով պողոտայի 2.1 հա մակերես ունեցող 21 հողամասում: Նախատեսվող գործունեության բուն տարածքում և հարակից տարածքներում չկան բնապահպանական առումով զգայուն օբյեկտներ, չկան ձևավորված որևէ էկոհամակարգ, պատմության, մշակույթի կամ բնության հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Նախատեսվող համալիրը բաղկացած է լինելու է 64771.8 քմ ընդհանուր մակերես ունեցող բազմաֆունկցիոնալ հասարակական շինությունից, 1790 քմ ընդհանուր մակերես ունեցող օժանդակ շինությունից և 93.4 քմ մակերես ունեցող պարսպից: Բազմաֆունկցիոնալ հասարակական շինությունը բաղկացած է լինելու է երկու ստորգետնյա և չորս վերգետնյա հարկերից: Առաջին և երկրորդ հարկերում նախատեսվում է առևտրահասարակական երկհարկանի հատված, որտեղ պետք է լինեն՝ բանկեր, դեղատուն, մթերային, տնտեսական, էլեկտրոնիկայի խանութներ և այլ հասարակական սպասարկման օբյեկտներ: Երրորդ և չորրորդ հարկերում նախատեսվում է տեղակայել ընդհանուր 118 ավտոտեղամասեր և

գրասենյակային տարածքներով կազմված երկհարկանի հատված: Երկրորդ հարկի տանիքի մնացած՝ չկառուցապատված հատվածում, լինելու է ապարտամենտների համար նախատեսված կանաչապատ, բարեկարգ ներքին բակ և լողավազան: Համալիրի առաջին ստորգետնյա հարկում պետք է լինի 140 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի, որը լիովին կբավարարի խանութ-սրահի սպասարկմանը և կլուծի մեքենաների կայանելու հարցն այցելուների և աշխատող անձնակազմի համար: Երկրորդ ստորգետնյա հարկում նախատեսված է ավտոկայանատեղի՝ ապարտամենտների համար՝ մեկ ապարտամենտին մեկ մեքենայի հաշվարկով: Ստորգետնյա երկու հարկերն էլ արտակարգ իրավիճակների ժամանակ օգտագործվելու են որպես ապաստարաններ: Համալիրի բոլոր հարկերում նախատեսվել են հարմարություններ սակավաշարժ մարդկանց համար՝ թեքահարթակներ, սանհանգույցներ և ավտոկայանատեղիներ:

Օժանդակ շինությունը նախատեսված է մեկ ստորգետնյա և չորս վերգետնյա հարկերից: Ստորգետնյա հարկում նախատեսվում է իրականացնել համալիրի հրդեհաշիջման համար պոմպակայան, որտեղ պետք է լինի ջրային պահոցը: Առաջին հարկում նախատեսվում է չոր (ոչ յուղային) էլեկտրական ենթակայան, երկրորդ և երրորդ հարկերն օգտագործվելու են որպես տեխնիկական տարածքներ, իսկ չորրորդ հարկը՝ կաթսայատուն:

Շինության բոլոր կողմերից նախատեսված են ճանապարհներ՝ հրշեջ մեքենաների համար: Հողատարածքի մնացած հատվածը՝ 4452 քմ մակերեսը կանաչապատվելու է: Իսակովի պողոտայի և հատկացված հողատարածքի դիմային սահմանագծի միջև եղած հանրային տարածքը նույնպես նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողի ընդհանուր մակերես՝ 2.1 հա,
- կառուցապատման մակերես՝ 11960 քմ,
- կանաչապատման մակերես՝ 4452 քմ,
- ճանապարհ և մուտքեր՝ 4588 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Օբյեկտի ընդհանուր շինարարության նորմատիվ տևողությունը 60 ամիս է: Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները նախատեսվում է իրականացնել՝ պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Ջրամատակարարումն իրականացվելու է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն՝ ՀՀ գործող շինարարական նորմերին և կանոններին համապատասխան: Էներգախնայողության բարձրացման նպատակով սենքերում լուսավորության ցանցն իրականցվելու է առանձին խմբերով, իսկ աստիճանավանդակներում և ստորգետնյա ավտոկայանատեղիներում նախատեսվում են շարժման տվիչներ: Գազամատակարարումը կիրականացվի համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

27.12.2024թ-ին տրված տեխնիկական պայմանի:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում՝ հողային հանույթի զանգվածը հաշվարկված է 25488 խմ, որից 3814 խմ-ն կպահեստավորվի և շինարարական աշխատանքների ավարտական փուլում կօգտագործվի հետլիցքի և տարածքի բարեկարգման նպատակով, իսկ 21674 խմ-ը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից առաջարկվող վայր: Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա հասարակական համալիրի կառուցման ընթացքում, շինարարական և կենցաղային աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի՝ շինթույլտվությամբ սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն: Թափոնների ծավալային հաշվարկված ցուցանիշներն են՝ շինարարական թափոնների տարեկան ծավալը՝ 12x24x1.5=432 խմ, կենցաղային աղբի տարեկան ծավալը՝ 12x24x0.5=144 խմ: Շինթափոնները կհավաքվեն՝ համաձայն ՇԳՀ-ի: Թափոնների համար նախատեսված է 2 աղբաման՝ 1.5x2.5x2.5 չափերով: Դրանք կհեռացվեն համապատասխան թափոնավայր՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և ընթացակարգերի: Կենցաղային աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի Երևանի քաղաքապետարանի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպության հետ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել,
- շինությունները ծածկել, համապատասխան բարձրությամբ թաղանթով,
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ուղղորդել պարզարան, որը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է 25 խմ ծավալով տարողություն, որի ծավալն ընտրվել է՝ հաշվի առնելով, որ շինարարական

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,

- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ,
- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,
- աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

Կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
3. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսված 1.500 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել են հանրային լսումներ: Երկրորդ հանրային լսումից հետո Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսվող գործունեության վերաբերյալ փորձաքնության է ներկայացվել առաջարկություններ և դիտողություններ՝ բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցման վերաբերյալ, կապված՝ Ծովակալ Իսակովի պողոտայի երթևեկության ծանրաբեռնվածության և թողունակության, հանգիստի մուտքի և ելքի

ճանապարհների ապահովման, ավտոկայանատեղիների թվաքանակի, ինչպես նաև բարեկարգման, կանաչապատման և արդիականացման նախագծով նախատեսված կանաչապատման լուծումների հետ: Նշված հարցերի վերաբերյալ տեղեկացվել է նաև «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն, որի կողմից նշված հարցերի վերաբերյալ ներկայացվել են լրացուցիչ պարզաբանումներ, ինչի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվել է դրական կարծիք՝ հաշվի առնելով որ տրանսպորտային միջոցների համար համալիրից ելքի ճանապարհ է առանձնացվել դեպի Բագրատունյաց փողոց, համալիրի տարածքում նախատեսվել է բացօթյա ավտոկայանատեղի՝ Իսակովի պողոտային հարակից հատվածում ավտոկայանատեղին առանձնացվել է մայթով, աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից հաստատվել է Իսակովի պողոտա հ. 21 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի տարածքի կանաչապատման նախագիծը:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Նախատեսվող համալիրի կառուցման ընթացքում պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 15-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարարի 2002 թվականի մայիսի 6-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» N 138 հրամանի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինարարության և գործունեության ընթացքում հաշվի առնել պողոտայի գերծանրաբեռնված երթևեկությունը՝ հատկապես առավոտյան ժամերին և իրականացնել բոլոր հնարավոր միջոցառումները՝ Ծովակալ Իսակովի պողոտայի տրանսպորտի ծանրաբեռնվածությունը չմեծացնելու վերաբերյալ:
- Խստագույնս հետևել Երևան քաղաքի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից հաստատված բարեկարգման, կանաչապատման և արդիականացման նախագծին համապատասխան կանաչապատման լուծումների իրականացմանը՝ ապահովելով 21.2 %-ը:

- Շինհրապարակի արտաքին տարածքը ժամանակավոր ցանկապատել, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
- Շինարարության ընթացքում ապահովել ջրցանի պարտադիր իրականացումը:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 21 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան